

ՀՏԴ 32.314.1

Հոգեբանություն

*Հարությունյան Ռոզալյա
ԱրՊՀ դասախոս*

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱԴԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սույն հոդվածում փորձ է արվել հոգեբանական անվտանգության հարցը դիտարկել Արցախյան շարժման և գոյապայքարի համատեքստում: Արցախյան շարժումն ու դրան հաջորդող պատերազմները ապացուցում են, որ հայ ժողովրդի հոգեբանական անվտանգությունը պայքարի, գոյության և գենոտիպի մեջ է: 1988 թ-ից սկիզբ դրվեցին՝ նոր շարժում, նոր պետականություն, նոր սերունդ և նոր գաղափարներ: Հոգեբանական անվտանգության հիմնահարցը շատ լուրջ է դիտարկվում ժամանակակից աշխարհում, հատկապես պատերազմներ վերապրած ժողովրդի՝ հայերիս համար այն դիտարկվում է որպես բարդ, բազմաառար ու շատ ակտուալ խնդիր:

Բանալի բառեր՝ հոգեբանական անվտանգություն, ապահովություն, կայունություն, հոգեկան առողջություն, ազատություն, ամբողջականություն, սոցիալական նորմ, «նա» պատկեր, արժեքներ

*Розалья Арутюнян
Преподаватель АРГУ*

**ПСИХОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ
БОРЬБЫ АРЦАХА**

В этой статье была сделана попытка рассмотреть вопрос о психологической безопасности в контексте Арцахского движения и борьбы за выживание. Арцахское движение и последующие войны доказывают, что психологическая безопасность армянского народа заключается в борьбе, существовании и в генотипе. Начиная с 1988-го года было заложено новое движение, новая государственность, новое поколение и новые идеи. Вопрос о психологической безопасности считается очень серьезным в современном мире, особенно для армян, переживших войны, поскольку рассматривается как сложная, разнообразная и очень срочная проблема.

Ключевые слова: психологическая безопасность, надежность, стабильность, психическое здоровье, свобода, целостность, социальная норма, §я | образ, ценности.

*Rosalı Harutyunyan
Teacher of the Artsakh State University*

**PSYCHOLOGICAL SECURITY IN THE CONTEXT OF NATIONAL LIBERATION
STRUGGLE OF ARTSAKH**

In this article there was an attempt to consider the issue of psychological security in the context of the Artsakh movement and the struggle for survival. The Artsakh movement and further wars prove that the psychological security of the Armenian people is about struggle, existence and genotype. Since 1988 a new movement, statehood, generation and new ideas have been established. The issue of psychological safety is considered to be very serious in the modern world, especially for the Armenians who survived during the war, because it is considered to be a complex, diverse and very urgent problem.

Key words: psychological security, reliability, stability, mental health, freedom, integrity, social norm, § İpm! image, values.

Աշխարհի գանկացած ազգ և յուրաքանչյուր մարդ ունի ազատության իրավունք և ողջ կյանքի ընթացքում ձգտում է ազատ ապրելուն: Երբ անձի ազատությունն ու անձնային տարածությունը սահմանափակում են, նրա մոտ կարող են առաջանալ բազմաափսի նկրոզներ ու հոգեբանական անհարմարավիճակության զգացում, որն էլ իր հերթին հանգեցնում է հոգեբանական անվտանգության խաթարմանը:

Հիմա փորձենք հասկանալ, թե ինչպես են փոխկապակցված ազատություն և հոգեբանական անվտանգություն հասկացությունները: Նախ և առաջ ազատությունը անձին տալիս է լիարժեքության, անկախության և երջանկության զգացում, բարձրացնում է նրա ինքնավստահությունն ու ինքնագնահատականը: Ուրեմն կարող ենք ասել, որ այս ամենը առնչվում է նաև հոգեբանական անվտանգություն հասկացության հետ:

Հոգեբանական անվտանգությունը՝ հոգեկանի ապահովությունն է, անձնային ամբողջականության, հոգեկան առողջության և հոգևոր կառույցի պաշտպանությունը : ¹Ժամանակակից զարգացող աշխարհը մերժել է բացարձակ անվտանգության հայեցակարգը և ի վերջո եկել հանդուրժողականության դիսկի հայեցակարգին: Առհասարակ, անձի ողջ կյանքի ընթացքում չի կարող խոսք լինել բացարձակ անվտանգության մասին: Անվտանգության խնդրի հայտնի հետազոտողներից Ա. Լ. Ռոմանովիչը կարծում էր, որ. «անվտանգությունը համակարգի հիմնական բնութագրերը, հատկությունները պահպանելու օբյեկտի ունակությունն է, ներքին կամ արտաքին տարբեր միջավայրերի առարկաների հետադիմական /ռեգրեսիվ/ կամ կործանարար ազդեցությունների հետևանքով»² : Նա ընդգծում է օբյեկտի նշանակությունը սեփական անվտանգության ապահովման գործում, ինչը խիստ կարևոր է ոչ միայն տազնապային իրավիճակներում, այլև առօրյա կյանքի պայմաններում:

Անվտանգություն հասկացությունը վերջին տարիներին ձեռք է բերել ոչ միայն հանրային, այլև համաշխարհային նշանակություն: Անվտանգությունը՝ բարդ, բազմաբովանդակ, բազմակառույց, կենսաապահովական համակարգ է, որը ամեն առումով փոխկապակցված է կյանքի կարևոր ասպեկտների հետ: Հոգեբանական անվտանգությունը մեծապես հիմնվում է անձի սուբյեկտիվ աշխարհընկալման, հուզական ոլորտի կայունության, անձնային փորձի, հոգեկանի գործունեության առանձնահատկությունների, բնավորության և խառնվածքի վրա: Այս տարրերի ներդաշնակ փոխազդեցությունն էլ բերում է հոգեկանի ամբողջականության, առանց որի չի կարող լինել լիարժեքության և անվտանգության զգացում:

Անհրաժեշտ է շատ լավ պատկերացում կազմել անվտանգություն հասկացության մասին, այն, թե ինչ տարրեր են ներառված նրանում և ինչ է կարող մեզ տալ նրա բավարարումն ու լիարժեք ապահովումը: Անվտանգությունը սուսկ նեղ գիտական կատեգորիա չէ և ոչ նեղ մասնագիտական խնդիր: Այն կա և պետք է կայունանա որպես հանրային գաղափարական ստրատեգիա:

Դիտարկելով հոգեբանական անվտանգություն հայեցակարգը՝ Ս. Կ. Ռոշինը և Վ. Ա. Սոսնինը³ վերլուծեցին այս հայեցակարգի բովանդակության սահմանումը տարբեր երկրների բացատրական բառարանների հիման վրա: Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուների ակադեմիական բառարաններն ուսումնասիրելու գործընթացում պարզվել է, որ մարդկային գիտակցության մեջ Տանվտանգություն՝ հասկացությունը կապված է ոչ այնքան Տապառնալիքի բացակայության՝, ինչքան որ առանձին անհատների հույզերի և զգացմունքների հետ: Օրինակ՝ Չեմբերսի բառարանում ⁴ «անվտանգության» հայեցակարգը ներկայացվում է որպես անվտանգություն ապահովող վիճակ, հույզ և միջոց: Անվտանգության հայեցակարգը կապված է «տազնապայնության և մտահոգվածության» վիճակների բացակայության, «վստահության» ու «կայունության» վիճակների առկայության հետ ⁵: Ֆրանսիական «Լյարուս» և Անգլիական «Օքսֆորդական» բառարաններում նույնպես «անվտանգություն» հայեցակարգը մեկնաբանվում է որպես «ինչ - որ մեկին կամ ինչ-որ բանի ապավինել կարողանալու, հուսալիության և վստահության իրողություն»: Այս ամենը վկայում է այն մասին, որ մշակութային տարբեր նորմեր կրող մարդիկ գրեթե նույն ձևով են պատկերացնում Տանվտանգության՝ հասկացությունը: Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ հայերս, հատկապես, Ղարաբաղի և սահմանամերձ շրջանների բնակիչներս ապահովված չենք վտանգից, այսինքն հոգեբանորեն պաշտպանված չենք, այսինքն չենք կարող պնդել, որ հոգեբանորեն առողջ ու ամբողջական ենք: Եթե անձը ունենում է սեփական ես-ի ոչ ամբողջական ու անհամակարգված պատկեր՝ խնդիրներ են առաջանում նրա իրական «ես» պատկերի հետ: Այս երևույթը կարևոր ենք համարում դիտարկել անձ-հասարակություն հարաբերությունների համատեքստում:

Ֆ. Կ. Մուզուլովը իր «Անձի անվտանգությունը» մենագրության մեջ նշում է. «...անվտանգությունը հիմնականում կարելի է բնութագրել որպես նշանների մի համակարգ, որը բնութագրում է անվտանգության մշտական իրավիճակը, երբ անձը պաշտպանված է սպառնալիքներից ու վտանգներից,

¹ Герасимов В. Д., Угрозы информационно-психологической безопасности личности и их основные источники, Шуйский филиал Ивановского Государственного университета Шуя, Россия, <https://cyberleninka.ru/article/c/psihologiya>

² Баева И. А., Психологическая безопасность в образовании: Монография. – СПб., 2002, стр. 53

³ Рошин С.К., Соснин В.А., Психологическая безопасность: новый подход к безопасности человека, общества и государства//Российский монитор. 1995. № 6; Общая теория безопасности (актуальные методологические и социально-политические проблемы). — М., 1994.

⁴ Лондон, 1901 год. Издательство "W. & R. Chambers" / Chambers Twentieth century dictionary edited by william, m.a.,b.sc. revised edition with supplement. Словарь английского языка Чемберса 20-го века London W. & R. Chambers Ltd. 1965 г., 1396 с.

⁵ Рошин С.К., Соснин В.А., указ.соч., //Российский монитор. 1995. № 6.

որոնց ազդեցությունը կարող է չափազանց բացասական անդրադառնալ նրա անձի կառուցվածքային և ֆունկցիոնալ կառույցի, նրա ամբողջականության զգացողության վրա, ընդհուպ մինչ լրիվ ոչնչացումը»¹ :

Անվտանգությունը որպես թիրախ համընկնում է հասարակության կայուն զարգացման նպատակի հետ, քանի որ առանց անվտանգության ապահովման զարգացման և աճի մասին խոսք չի կարող լինել: Եթե անվտանգությունը դիտարկենք որպես սոցիալական նորմ՝ անվտանգություն-նորմա համատեքստում, ապա հստակ կարող ենք ասել, որ այն սոցիալական արժեք է ներկայացնում, որը վաղուց ինտեգրված է անհատական և ազգային գիտակցության մեջ:

Հոգեբանական անվտանգությունը – հոգեկանի անվտանգությունն է, անձի անհատական ամբողջականությունը, հոգեկան առողջության և հոգևոր աշխարհի պաշտպանությունը:

Օբյեկտի նկատմամբ անվտանգության գիտական կատեգորիան մեկնաբանվում է ինչպես օբյեկտի որոշակի վիճակ, որը անբաժան է նրանից իր ողջ կյանքի ընթացքում, այնպես էլ բնութագրվում որպես իրավիճակային և մշտական անվտանգության վիճակ: Այն բնորոշվում է որպես օբյեկտի շահերի անվտանգության ապահովման մակարդակ, որին բնորոշ է վտանգը կանխելու և հաղթահարելու մեթոդների ու միջոցների բավարար պայմանների առկայությունը: Անվտանգությունը բնորոշվում է որպես օբյեկտի կայունության որակական երաշխիք, որը նպաստում է օբյեկտի, հասարակության զարգացման ու աճի նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Հոգեբանական անվտանգությունը կառուցված է երկու ասպեկտներից՝ անձի և միջավայրի հոգեբանական անվտանգությունից² : Մարդկային անվտանգությունը որոշվում է երեք գործոններով՝ մարդկային, շրջակա միջավայրի և պաշտպանվածության: Առաջին երկուսը համարվում են հիմնական ու առաջնային: Մարդկային գործոնը՝ մարդու տարբեր պատասխաններն են սպառնացող վտանգին: Միջավայրը ավանդաբար բաժանվում է ֆիզիկականի ու սոցիալականի: Այսօր սոցիալական միջավայրի ներգործությունը շատ ավելի արդիական է անվտանգության համատեքստում դիտարկելը, չնայած ֆիզիկական միջավայրի՝ որպես անվտանգության գործոնի դերը ևս կարելի է համարել օրակարգային է:

Անվտանգության կամ պաշտպանվածության գործոնը՝ դրանք գործիքներ են, որոնք մարդիկ օգտագործում են տագնապային և վտանգավոր իրավիճակներում պաշտպանվելու համար: Դրանք կարող են լինել ֆիզիկական և հոգեբանական (հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ)³ :

Եթե հոգեբանական անվտանգություն հայեցակարգը տեղայնացնել Արցախի օրինակով, ապա տեղին կլինի նշել, որ այստեղ բնակչությունը ինտերնացիոնալիզմի և Տեղբայրական՝ ազգի ուղղահայաց էթնիկական շփումներում հասել էր մարզինալության, այսինքն հոգեբանորեն անառողջ վիճակի: Անա դիլին (Ադրբեյջանի մայրենի լեզուն) ուսումնասիրվում էր Արցախի դպրոցների տարրական դասարաններին, հայոց պատմության փոխարեն ուսումնասիրվում էր Ադրբեյջանի աշխարհագրությունն ու պատմությունը: Հայկական թատերախմբերի այցը Ստեփանակերտ արգելվում էր և համահարթեցնող բազում միջոցառումներ, որոնք կազմակերպվում էին պետական մակարդակով: 1988-ի շարժումը հայ ոգու արթնության ու ազատության ճիչն էր, որը նույնպես ճգնաժամային փուլ կարելի է համարել, ինչպես նաև մարզինալության դրսևորման նպաստավոր պայման:

Հոգեբանական անվտանգության հետ կապված ցանկացած խնդիր կարող է լուրջ ազդեցություն ունենալ մարդու կենսագործունեության վրա, սահմանափակել նրա լայնածավալ հնարավորությունները, ստեղծել բազմապիսի խնդիրներ ու խոչնդոտել նրա գործողությունները: Ասվածը սուսկ արտաքին չափորոշիչներով չէ պայմանավորում վտանգը: Մենք գործ ենք ունենում ԲՆՀ-ի (բարձրագույն նյարդային համակարգ) և հոգեկանի քայքայման կոնստրուկտիվ պայմանների հետ: Ներքին տագնապային վիճակը ծնում է լարվածություն, չմտածված գործողություններ, քառս և նույնիսկ խուճապ ու փախուստի ցանկություն:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ հոգեբանական անվտանգությունը լուրջ, հրատապ ու բազմաառար խնդիր է հատկապես պատերազմներ վերապրած ժողովրդի համար: Արցախյան շարժումն ու դրան հաջորդող պատերազմները ապացուցում են, որ հայ ժողովրդի հոգեբանական անվտանգությունը պայքարի, գոյության և զենոտիալի մեջ, ավելի է ամրանում:

¹ Мугулов Ф.К., Безопасность личности: теоретические и прикладные аспекты социологического анализа: монография. Сочи: РИО СИМБиП, 2003. с. 45

² Обеспечение психологической безопасности в образовательном учреждении: практическое руководство/ под ред. И.А. Бaeвой. СПб.: Речь, 2006. 288 с.

³ Анасов В. Д., Лепский В. Е., Исходные посыпки проблематики информационно-психологической безопасности// Проблемы информационно-психологической безопасности. М.: Институт психологии РАН, 1996. с. 7-11

Օգտագործված գրականություն

1. Герасимова В. Д., Угрозы информационно-психологической безопасности личности и их основные источники, Шуйский филиал Ивановского Государственного университета Шуя, Россия, <https://cyberleninka.ru/article/c/psihologiya>
2. Баева И. А., Психологическая безопасность в образовании: Монография. – СПб., 2002, стр. 53
3. Рошин С.К., Соснин В.А., Психологическая безопасность: новый подход к безопасности человека, общества и государства//Российский монитор. 1995. № 6; Общая теория безопасности (актуальные методологические и социально-политические проблемы). — М., 1994.
4. Лондон, 1901 год. Издательство "W. & R. Chambers" / Chamberss Twentieth century dictionary edited by william, m.a.,b.sc. revised edition with supplement. Словарь английского языка Чемберса 20-го века London W. & R. Chambers Ltd. 1965 г., 1396 с.
5. Рошин С.К., Соснин В.А., Психологическая безопасность: новый подход к безопасности человека, общества и государства//Российский монитор. 1995. № 6; Общая теория безопасности (актуальные методологические и социально-политические проблемы). — М., 1994.
6. Мугулов Ф.К., Безопасность личности: теоретические и прикладные аспекты социологического анализа: монография. Сочи: РИО СИМБиП, 2003. с. 45
7. Обеспечение психологической безопасности в образовательном учреждении: практическое руководство/ под ред. И.А. Баевой. СПб.: Речь, 2006. 288 с.
8. Анасов В. Д., Лепский В. Е., Исходные посылыки проблематики информационно-психологической безопасности// Проблемы информационно-психологической безопасности. М.: Институт психологии РАН, 1996. с. 7-11